Հավելված N 1

ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/178 ծածկագրով

էլեկտրոնային աճուրդի հրավերի

**ԴԻՄՈՒՄ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ***

**Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու**

«ԴԻԱՎԱՆՏ» ՍՊԸ-ն հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցել Երևանի քաղաքապետարանի կողմից ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/178 ծածկագրով հայտարարված էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի (այսուհետ՝ ընթացակարգ) **1-ին** չափաբաժներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

«Դիավանտ» ՍՊԸ-ն հայտնում և հավաստում է, որ հանդիսանում է ՀՀ ռեզիդենտ:
«Դիավանտ» ՍՊԸ-ի՝

- հարկ վճարողի հաշվառման համարն է՝ 00255375
- բանկային հաշվեհամարն է՝ 2481101595190002
- գործունեության հասցեն է՝ ք. Երևան, Ազատության պող. 24/15
- էլեկտրոնային փոստի հասցեն է՝ lawyer@diavant.am
- հեռախոսահամարն է՝ +374 95 40 50 70
- ռուսերեն լեզվով անվանումն է՝ ООО Диавант

Սույնով «ԴԻԱՎԱՆՏ» ՍՊԸ-ն հայտարարում և հավաստում է, որ՝

1) «ԴԻԱՎԱՆՏ» ՍՊԸ-ն և իրեն փոխկապակցված անձինք բավարարում են ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/178 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և «ԴԻԱՎԱՆՏ» ՍՊԸ-ն պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, ընթացակարգի հրավերով սահմանված կարգով և ժամկետում ներկայացնել որակավորման ապահովում:

2) ընթացակարգին մասնակցելու շրջանակում՝

- թույլ չի տվել և (կամ) թույլ չի տալու անբարեխիղճ մրցակցություն, գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն,
- բացակայում է հրավերով սահմանված՝ «ԴԻԱՎԱՆՏ» ՍՊԸ-ին փոխկապակցված անձանց և (կամ) «ԴԻԱՎԱՆՏ» ՍՊԸ-ի կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս «ԴԻԱՎԱՆՏ» ՍՊԸ-ին պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցության դեպք:
- ստորև ներկայացնում է հայտը ներկայացնելու օրվա դրությամբ այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) ավել քան տաս տոկոսը, ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը, կամ այն անձի (անձանց) տվյալները, ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին, կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին (իրական շահառուներ)** և հավաստում, որ իրական շահառուների մասին ներկայացված տեղեկատվությունը իրական է և չի պարունակում ոչ հավատի տեղեկություններ:

| Անունը Ազգանունը Հայրանունը | ՀՀ քաղաքացիների համար՝ նույնականացման քարտի կամ անձնագրի կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը | Օտարերկրյա քաղաքացիների համար համապատասխան երկրի օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը |
|---|---|---|
| | | |
| | | |
| | | |

3) ապահովված է դիմում-հայտարարությունը ներկայացնելուց հետո էլեկտրոնային աճուրդի համակարգի կողմից տրամադրված եզակի ծածկագրի (PIN կոդը) անվտանգությունն ու գաղտնիությունը և դրա օգտագործմամբ էլեկտրոնային աճուրդի համակարգում ընթացակարգին մասնակցելուց բխող ցանկացած գործողություն կատարվում է համապատասխան լիազորություն ունեցող անձի կողմից:

«Դիավանտ» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը ներկայացվում է՝ համակարգի միջոցով:

«Դիավանտ» ՍՊԸ-ի տնօրեն ՝ Դավիթ Առաքելյան

Ստորագրող
ԱՐՄԻՆԵ ԲԱՏԻԿՅԱՆ
6103840430
2026-04-28 09:52:08 GMT+04:00
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

_______________________________________

(Մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, ղեկավարի անուն ազգանունը)) (ստորագրությունը)

**Հավելված N 1.3****

**<u>ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/178</u> ծածկագրով**

**էլեկտրոնային աճուրդի հրավերի**

**ՁԵՎ**

ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ

Ստորև ներկայացվում է «Դիավանտ» ՍՊԸ -ի իրական շահառուների վերաբերյալ

տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը՝

https://e-register.moj.am/hy/companies/39275641/declarations/f461bed7-813b-41d3-a318-f31a38957cfb

**«Դիավանտ» ՍՊԸ -ի տնօրեն՝ Դ. Առաքելյան**

Ստորագրող
ԱՐՄԻՆԵ ԲԱՏԻԿՅԱՆ
6103840430
2026-04-28 09:53:30 GMT+04:00

______________________________________________ ____________

Մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) ստորագրությունը)

Կ. Տ.

N 2259-02

«27» 02 2026

### ԵՐԱՇԽԻՔ

1.Սույն երաշխիքը, ինչպես նաև սույն երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում են Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ բենեֆիցիար) կողմից ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/178 ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգին «ԴԻԱՎԱՆՏ» ՍՊԸ (այսուհետ՝ պրինցիպալ) մասնակցելուց բխող՝ նույն ծածկագրով հրավերով սահմանված պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2.Երաշխիքով«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 9,200,000 (ինը միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն 900015211429 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5.Երաշխիքը գործում է թողարկման պահից և ուժի մեջ է բենեֆիցիարի կողմից ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/178 ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգին մասնակցելու նպատակով պրինցիպալի կողմից հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված մեկ հարյուր քսան աշխատանքային օր, բայց ոչ ուշ քան 06.11.2026 թվականը ներառյալ: Սույն երաշխիքի տրամադրման փաստի վերաբերյալ տեղեկատվությունը՝ երաշխիքի համարը, տրամադրող բանկի անվանումը և սույն երաշխիքի 1-ին կետում նշված ծածկագիրը՝ առանց գումարի չափի մասին նշման, երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է սույն կետում նշված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի՝ sofa.khachatryan@yerevan.am էլեկտրոնային փոստի հասցեին:

6.Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում է հայտը մերժելու մասին գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրության պատճենը և երաշխիքը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հետգործառնական ծառայության ղեկավար՝ Ա. Սարգսյան

AMIO
Հետգործառնությունների վարչություն
Back Office Operations Division
2

DIAVANT

# Լիազորագիր

Ք. Երևան «27» 04 2026թ.

**«Դիավանտ» ՍՊԸ-ն,** (Գրանցման համար 264.110.08214; ՀՎՀՀ 00255375, հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Սոսեի 28/1, բն.20) ի դեմս տնօրեն Դավիթ Սարգսի Առաքելյանի, (անձնագիր՝ AT0357003, տրված 16.01.2020թ. 001-ի կողմից, հաշվառման հասցեն՝ ք. Երևան, Լենինգրադյան փող. 31/4, բն. 7), լիազորում է Արմինե Գրիշայի Բատիկյանին (Նույն. քարտի համար 019790393, տրված 26.11.2025թ, 007-ի կողմից) «Դիավանտ» ՍՊԸ-ի անունից կազմելու, ստորագրելու, կնքելու (այդ թվում՝ էլեկտրոնային), պայմանագրեր, համաձայնագրեր, գրություններ, հանձնելու, ստանալու անհրաժեշտ փաստաթղթեր, ներկայացնելու հայտ, ներկայացնել դիրքորոշումներ, մասնակցելու բանակցություններին «ԼՓ-ԷԱՃԾԱՊՁԲ-26/178» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի շրջանակներում:

Լիազորագիրը տրվում է 1 (մեկ) տարի ժամկետով

Լիազորված անձի ստորագրություն ____________

«Դիավանտ» ՍՊԸ-ի Տնօրեն՝ Դ. Առաքելյան ____________

(ստորագրություն)

Կ. Տ.